# Մրցույթի հայտարարություն

ՀՀ Արագածոտնի մարզի «Գետափի հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի կառավարման խորհուրդը հայտարարում է բաց մրցույթ՝ հաստատության տնօրենի թափուր պաշտոնի համար:

Հաստատության տնօրենի պաշտոնի համար անցկացվող մրցույթին մասնակցելու պարտադիր պայմաններն են՝

1.ՀՀ քաղաքացիությունը,

2.«Հանրակրթության մասին» օրենքի 12-րդ հոդվածի 17-րդ մասով սահմանված հիմքերի բացակայությունը:

Մրցույթին մասնակցելու համար պահանջվող փաստաթղթերն են՝

1.դիմում՝ հաստատության կառավարման խորհրդի նախագահի անունով,

2. ՀՀ քաղաքացու անձնագրի կամ նույնականացման քարտի պատճենը (բնօրինակի հետ),

3.հաստատության ղեկավարման իրավունքի (հավաստագրի) պատճենը (բնօրինակի հետ),

4.տվյալ հաստատության զարգացման ծրագիրը թղթային և էլեկտրոնային տարբերակով (որը հավակնորդը կարող է ներկայացնել մինչև գործերի ընդունման ժամկետի ավարտը),

5. ինքնակենսագրություն:

Փաստաթղթերի պատճենները պետք է ներկայացնել բնօրինակների հետ:

Փաստաթղթերի ընդունումը կանցկացվի՝ ըստ կարգի:

Փաստաթղթերն ընդունվում են 2021 թ. սեպտեմբերի 25-ից մինչև հոկտեմբերի 14-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 10:00-ից 14:00-ը, բացի հանգստյան /շաբաթ, կիրակի/ օրենքով սահմանված ոչ աշխատանքային՝ տոնական և հիշատակի օրերից, Գետափի հիմնական դպրոցում:

Մրցույթը տեղի կունենա 2021 թվականի հոկտեմբերի 28-ին՝ ժամը 13:00-ին, ՀՀ Արագածոտնի մարզի Գետափի հիմնական հիմնական դպրոցում, հասցեն՝ Արագածավան համայնք, Գետափ բնակավայր, 1-ին փողոց, 1-ին փակուղի, շենք՝ 2:

Լրացուցիչ տեղեկությունների համար զանգահարել դպրոցի կառավարման խորհուրդ, հեռախոս՝ 098-42-80-98: